ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԽՈՐԱՊԵՍ ՑԱՎԱԿՑՈՒՄ Է ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶՈՀՎԱԾ ԲԱՆՎՈՐԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 10 ապրիլի 2001 թ.:

Երեկ, ապրիլի 9-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ցավով տեղեկացավ ապրիլի 8-ին Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու շինարարությունում տեղի ունեցած դժբախտ պատահարի մասին, որի հետևանքով զոհվել է երիտասարդ մի բանվոր:

Կատարվածի առիթով նույն օրը Նորին Սրբությունը Ս. Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ վրդ. Խաչատրյանի միջոցով իր խորին վշտակցությունը փոխանցեց ողբացյալ ընտանիքին ու նրա զավակներին, որոնք այսուհետ կգտնվեն Ս. Էջմիածնի և Վեհափառ Հայրապետի բարեխնամ հոգածության ներքո:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԽԱՂԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 10 ապրիլի 2001 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի անդամներին՝ կոմիտեի նախագահ Աշոտ Մելիք- Շահնազարյանի գլխավորությամբ:

Նորին Սրբությունը իր գնահատանքն ու օրհնությունը տվեց Համահայկական խաղերի կազմակերպիչներին, որոնց նախաձեռնությամբ այս տարի օգոստոսի 18-26-ը Հայաստանում տեղի կունենան երկրորդ համահայկական խաղերը՝ աշխարհի ավելի քան 30 երկրների շուրջ 3000 երիտասարդ մարզիկների մասնակցությամբ:

Վեհափառ Հայրապետը մարզական այս միջոցառումը համարեց գովելի մի ձեռնարկ՝ նշելով, որ այդ ճանապարհով լավագույնս է իրականացվում Հայաստան-սփյուռք մերձեցման կարևոր առաքելությունը:

Վերհիշելով երկու տարի առաջ հաջողությամբ տեղի ունեցած առաջին համահայկական խաղերը՝ Վեհափառ Հայրապետը համոզմունք հայտնեց, որ 1700-ամյա հոբելյանական տարում դրանք առավել լայն արձագանք և ընդգրկում կունենան՝ նոր ոգի և խանդավառություն հաղորդելով հայ երիտասարդներին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԷՍՏՈՆԻԱՅԻ ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 13 ապրիլի 2001 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Էստոնիայի ԱԳ նախարար Թոմաս Հենդրիկ Իլվեսի գլխավորած պատվիրակությանը:

Ողջունելով հյուրերին, Հայոց Հայրապետը նշեց, որ Հայ Եկեղեցու հոբելյանական տարում առանձնակի ուրախություն է բոլոր բարեկամ երկրների և ժողովուրդների ներկայացուցիչների այցելության ընդունումը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում:

Նորին Սրբությունը գոհունակությամբ նշեց հեռիխորհրդային շրջանում հայ և էստոնացի երկու ժողովուրդների շարունակվող բարեկամությունը և իր մասնավոր գնահատանքը հայտնեց Էստոնիայի իշխանություններին՝ էստոնահայ համայնքի նկատմամբ ունեցած հոգատար վերաբերմունքի համար: Վերջինիս վկայությունն է այն, որ, շնորհիվ էստոնական կառավարության, էստոնահայ համայնքը կունենա նաև իր եկեղեցին:

Զրույցի ընթացքում Նորին Սրբությունը անդրադարձավ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ. «ԶՈՐԱՆԱՆՔ ՀԱՎԱՏՈՎ ԵՎ ԶՈՐԱՑՆԵՆՔ ԱՇԽԱՐՀԱՍՓՅՈՒՌ ԱԶԳԱՅԻՆ ՄԵՐ ԿՅԱՆՔԸ»

ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՀՐԱՇԱՓԱՌ ՏՈՆԸ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 15 ապրիլի 2001 թ.:

Այսօր Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և ողջ քրիստոնյա աշխարհը նշեց Հիսուսի Հարության հրաշափառ տոնը՝ Սուրբ Զատիկը:

Առավոտյան Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Հրաշափառ»-ով և շարականների երգեցողությամբ մեծահանդես թափորի ուղեկցությամբ ուղղվեց դեպի Ս. Էջմիածնի Մայր Տաճար՝ մատուցելու զատկական Ս. Պատարագ և Միածնաէջ Մայր Աթոռից Հիսուսի Հարության ավետիսով Հայրապետական իր պատգամը հղելու համայն հայությանը:

Ամիսների վերանորոգումից հետո 1700-ամյա Մայր Տաճարը իր նորոգ հանդերձանքով առավել շքեղ է ներկայանում հավատավոր հոտին: 18-րդ դարում արված Նաղաշ Հովնաթանի նրբահյուս որմնանկարները ժամանակակից նկարիչների մանրակրկիտ աշխատանքից հետո վերագտել են իրենց անկրկնելի գունագեղությունը և առավել պայծառ ու տոնական դարձրել Մայր Եկեղեցին: Հայտնություն են նաև վերանորոգման ընթացքում Տաճարի պատին հայտնաբերված վեց հնաբույր խաչքարերը:

«Ուրախ լեր, Սուրբ Եկեղեցի, քանզի այսօր քո լույս խորաններից շնորհն է բաշխվում Հարության և կյանքի:

Զվարճացիր, Եկեղեցի Հայաստանյայց, այսօր բացվել են երկնքի դռները, և Հարուցյալ Փրկչի սիրառատ հայացքն է ուղղված Քեզ, որ տոնախմբում ես հայոց պետության՝ ի Քրիստոս մկրտության 1700-ամյան»,- հընթացս սրբազան արարողության Վեհափառ Հայրապետը Հարության խորհրդով ու Հայոց մեծ դարձի 1700-ամյակի տոնական ոգով իր ողջույնը, օրհնությունն ու շնորհավորանքը հղեց Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու նվիրապետական Աթոռների գահակալներին, ողջ հոգևոր դասին, Հայաստանի Հանրապետության ավագանուն և համայն հայությանը:

«Այսօր, երբ 2001 թվականի հոբելյանազարդ տարին փառապսակ թագադրվում է Հարության շնորհանորոգ խորհրդով, Միածնի Էջքի Սուրբ Սեղանի առջև աղոթարար հոգով, հանուն աշխարհասփյուռ մեր ժողովրդի աներկբա վկայում ենք. Տեր,

մենք պահեցինք մեր հավատարմությունը Քեզ, փրկարարանք, բայց չուրացանք, նույնիսկ երբ մահվան ու չարիքի դեմ հանդիման թվում էր, թե մոռացել ես մեզ»,- հայ ժողովրդի հավատարմությունն առ Աստված հաստատեց Հայոց Հայրապետը՝ հորդորելով, որ «Հայոց Դարձի 1700-ամյակի խորհրդով լեցուն՝ հավատով խոստովանենք մեր պատկանելությունը Աստվածակառույց Հայ Եկեղեցուն, որպեսզի այն, զորավոր մեր հավատարմությամբ, շարունակի առաջնորդել համազգային մեր երթը դեպի Աստված: Զորանանք հավատով և զորացնենք աշխարհասփյուռ ազգային մեր կյանքը»:

Պատարագի սրբազան արարողությանը ներկա էին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը, Ազգային ժողովի նախագահ Արմեն Խաչատրյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Ազգային ժողովի պատգամավորներ, նախարարներ, Հայաստանում հավատարմագրված դիվանագետներ, Հայաստանում գործող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, արվեստի և մշակույթի գործիչներ, բազմաթիվ հավատացյալներ:

Սրբազան արարողության ողջ ընթացքը ուղիղ եթերով հեռարձակվում էր Հայաստանի Հանրապետության Հանրային հեռուստատեսությամբ:

Սուրբ Պատարագի ավարտից հետո Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ պաշտոնական ընդունելություն, որի ընթացքում ամենքին վերստին տրվեց ավետիսը Քրիստոսի Հրաշափառ Հարության:

ՆՈՐ ՆՇԱՆԱԿՈՒՄՆԵՐ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԵՄԵՐՈՒՄ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 19 ապրիլի 2001 թ.:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր տնօրինությամբ նոր թեմակալ առաջնորդներ են նշանակվել Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու երեք թեմերում:

Հայրապետական տնօրինությամբ Գերշ. Տ. Գրիգորիս արքեպս. Բունիաթյանը նշանակվել է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ:

Նորին Սրբության նույն տնօրինությամբ Նոր Նախիջևանի և Ռուսասատանի հայոց թեմի առաջնորդի պաշտոնակատար, Հոգշ. Տ. Եզրաս վարդապետ Ներսիսյանը նշանակվել է Նոր Նախիջևանի և Ռուսասատանի հայոց թեմի առաջնորդ և Մոսկվայի ու Համայն Ռուսիո Պատրիարքությունում Հայ Եկեղեցու ներկայացուցիչ:

Հարավային Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդական տեղապահ, Հոգշ. Տ. Մովսես վրդ. Մովսիսյանը Ամենայն Հայոց Հայրապետի տնօրինությամբ ծառայության է կոչվել նույն թեմում՝ որպես առաջնորդ:

ԱՊՐԻԼԻ 21-ԻՆ ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՄԵԿՆԵՑ ՄՈՍԿՎԱ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 21 ապրիլի 2001 թ.:

Այսօր, առավոտյան, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը մեկնեց Մոսկվա՝ Մոսկվայի և Համայն Ռուսիոյ Պատրիարք Ալեքսի Բ-ի հետ նախագահելու հաջորդ օրը Կրեմլի մեծ դահլիճում կայանալիք Հիսուս Քրիստոսի Հարության հրաշափառ տոնին և քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակին նվիրված հանդիսությանը: Վեհափառ Հայրապետին Մոսկվա ուղեկցեցին Հայաստանի և արտերկրի թեմական առաջնորդներ:

ԱՊՐԻԼԻ 24-ԻՆ ԴԵՐ ԶՈՐԻ Ս. ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՊԱՏԱՐԱԳԵԼՈՒ Է ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 23 ապրիլի 2001 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, վերադառնալով Մոսկվայից, ուխտի մեկնեց Դեր Զոր:

Գարեգին Բ Կաթողիկոսը Ամենայն Հայոց առաջին Հայրապետն է, որ մեկնում է 1915 թ. Հայոց Մեծ եղեռնի այս սրբավայր՝ ծնրադրելու բյուրավոր նահատակների հիշատակի առջև:

Դեր Զորում՝ հազարավոր հայերի նահատակության այս վայրում, կառուցված է Ս. Նահատակաց եկեղեցին, որտեղ ապրիլի 24-ին՝ Ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, Հայոց Հայրապետը կմատուցի Ս. Պատարագ և Մեծի Տանն Կիլիկիո

Արամ Ա Վեհափառի հետ աղոթք կբարձրացնի առ Աստված՝ ոգեկոչելու համար 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հիշատակը:

Մեկնումից առաջ Նորին Սրբությունը աղոթքի կոչեց ողջ հայությանը, որոնք, իրենց հոգիներում ծրարած ունենալով բյուր նահատակների երազները, կերտում են անկախ պետականություն և զորեղ գալիք:

«Այն, ինչ այսօր մենք ենք տալիս մեր հայրենիքին, ավելի թանկ չէ, քան բյուրավոր նահատակների կյանքերը: Մեր այս ուղևորությամբ կամրջվում են Դեր Զորը և Ծիծեռնակաբերդը, միախառնվում են հայ ժողովրդի աղոթքները՝ ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի», - ասաց Նորին Սրբությունը:

Վեհափառ Հայրապետի ուխտագնացությունը Դեր Զոր նվիրվում է 1700-ամյա մեծ հոբելյանին: Նորին Սրբությանը ուղեկցում է մեծաթիվ շքախումբ, որի մեջ ընդգրկված են բարձրաստիճան հոգևորականներ, պետական պաշտոնատար անձինք, արվեստի և մշակույթի գործիչներ:

Վեհափառ Հայրապետը Մայր Աթոռ կվերադառնա ապրիլի 25-ին:

ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԿՈԼԵԿՏԻՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՆԵՐԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 27 ապրիլի 2001 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի անդամ պետությունների Անվտանգության խորհրդի քարտուղարների հանձնաժողովի երևանյան նիստի մասնակիցներին:

Նորին Սրբությունը, ողջունելով հյուրերին, գոհունակությամբ անդրադարձավ անվտանգության և խաղաղության պահպանման նպատակով տարբեր պետությունների միջև գոյություն ունեցող փոխհամագործակցությանը, ինչի շնորհիվ առավել հեշտությամբ կարելի է հաղթահարել ցանկացած ներազգային ու ներպետական խնդիր:

Հանդիպման ընթացքում ՀՀ նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Սերժ Սարգսյանը Վեհափառ Հայրապետին ներկայացրեց երևանյան նիստի նպատակներն ու արդյունքները: Ապա Ամենայն Հայոց Հայրա-

պետը հյուրերի խնդրանքով պատասխանեց նրանց բազմաբնույթ հարցերին՝ մանրամասնորեն անդրադառնալով Հայ Եկեղեցու էկումենիկ և միջկրոնական հարաբերություններին, կաթոլիկ և ուղղափառ Եկեղեցիների հետ դավանաբանական փարբերություններին, ինչպես նաև Հայ Եկեղեցում պատմականորեն ձևավորված նվիրապետական Աթոռներին:

Վեհափառ Հայրապետը կարևորեց Հայ Եկեղեցու եղբայրական հարաբերությունները քույր Եկեղեցիների հետ, ինչպես նաև այլ կրոնների հետ տարվող երկխոսությունը՝ մատնանշելով այն պատմական փաստը, որ հայկական համայնքները համերաշխորեն գոյատևում են այլադավան և այլակրոն բազմաթիվ երկրներում: Հյուրերը չափազանց կարևոր նկատեցին դարաբաղյան հակամարտության տարիների ընթացքում Ամենայն Հայոց Հայրապետների և Ադրբեջանի հոգևոր իշխանությունների միջև Ռուս Ուղղափառ Եկեղեցու պետ Ալեքսի Բ Պատրիարքի միջնորդությամբ շարունակվող երկխոսությունը՝ հանուն հիմնահարցի խաղաղ կարգավորման և խաղաղության հաստատման:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը իր մտահոգությունը հայտնեց նաև Հայաստան ներթափանցած բազմաթիվ աղանդների առնչությամբ, որոնք, որևէ աղերս չունենալով ժողովրդի ավանդույթների և պատմության հետ, պառակտում են առաջացնում ժողովրդի ներսում, խարխլում ազգային անվտանգության հիմքերը:

Հանդիպման մասնակիցների թվում էին ՌԴ Անվտանգության խորհրդի քարտուղար Վլադիմիր Ռուշայլոն, Հայաստանում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Անատոլի Դրյուկովը:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՍԻՐԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ

Մայր Աթոռ Ս. Էջմիածին, Տեղեկատվության համակարգ, 28 ապրիլի 2001 թ.:

Այսօր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանում Սիրիայի Արաբական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Համեդ Հասանին:

Հանդիպման ընթացքում խոսվեց Ամենայն Հայոց Հայրապետի՝ Դեր Զոր կատարած ուխտագնացության մասին:

«Մենք խորապես մխիթարված ենք, որ առիթ ունեցանք ուխտի մեկնել Դեր Զոր և աղոթք բարձրացնել 1,5 մլն հայ նահատակների համար»,- ասաց Վեհափառ Հայրապետը:

Նորին Սրբությունը, այցի վերաբերյալ իր տպավորությունները պատմելով, նշեց այն ջերմ ընդունելության մասին, որ ցուցաբերել էին Հալեպի հոգևոր ու աշխարհիկ իշխանությունները, Հալեպի ողջ ժողովուրդը: Վեհափառ Հայրապետը նշեց նաև, որ մեծապես տպավորված է սիրիահայ համայնքի առանձնաշնորհ դիրքով, ինչը երկու ժողովուրդների ամուր բարեկամության արգասիքն է: